ՍՅՈՒՆԻՔ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, որը անտեսում է պետական սահմանները, և նոր սերնդի զանգվածային ոչնչացման միջոցների ստեղծումը, որոնց կիրառման փաստը կարող է նույնիսկ թաքցվել հասարակությունից, դարձել են այնպիսի կարևորության վտանգների առաջացման աղբյուր, ինչպիսի կարևորություն ունեն բնածին և սոցիալ-տնտեսական վտանգները:

Տեղեկատվայնացումը, որը ստեղծելով գլոբալ ցանցային հասարակություն, ձևավորում է մեկ միասնական տեղեկատվական դաշտ, մի կողմից, իր մեջ ներառված երկրների քաղաքացիների համար կապ է ապահովում աշխարհում եղած գրեթե բոլոր նյութական ու բարոյական արժեքների հետ և բազմապատկում ինտելեկտուալ ռեսուրսները, և հետևաբար, նաև մյուս բոլոր ռեսուրսները՝ նպաստելով հասարակության և անհատի անվտանգության ու բարեկեցության ապահովմանը: Մյուս կողմից, տեղեկատվական տեխնոլոգիաները չեն հանդիսանում բացարձակ բարիք, քանի որ ստեղծում են հնարավորություններ հասարակական գիտակցության կառավարման ու մանիպուլիացիայի համար և միջպետական հակամարտության նոր արդյունավետ միջոցներ, հետևաբար, նաև ազգային անվտանգության նոր սպառնալիքներ:

Միևնույն ժամանակ հայտնի է, որ ազգի կամ պետության ամեն մի խոցելի գործոն ինքնաբերաբար հակառակորդի համար վերածվում է թիրախի: Հենց այս հանգամանքի հիման վրա էլ ստեղծվել է ժամանակակից տեղեկատվական պատերազմների հայեցակարգը և գաղափարախոսությունը: Ուշագրավ է, որ մարդու գիտակցության և հոգեկան աշխարհի վրա ազդելու և ձևափոխման (խեղաթյուրման) մեթոդաբանությունը մեծ «առաջընթաց» է ապրել ավելի զարգացած փուլի, այսպես կոչված երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների հայեցակարգը մշակելիս, որի մշակման աշխատանքները իրականացնում է ամերիկյան ՌԵՆԴ բաժնետիրական ընկերությունը:[1] Եվ եթե առաջին սերնդի տեղեկատվական պատերազմը

[1] Գ. Հարությունյան, Տեղեկատվական անվտանգության հիմնահարցեր, «Նորավանք» ԳԿՀ, Եր. 2003:

դիտվում էր որպես կարևոր բաղադրիչ ընդհանուր պատերազմի ավանդական միջոցների՝ միջուկային, կենսաբանական, քիմիական և այլ զենքերի կողքին, ապա երկրորդ սերնդինը՝ հանդես է գալիս լիովին ինքնուրույն:

Շատ հետազոտողների կարծիքով, սոցիալական աշխարհի ժամանակակից պատկերը լի է «ստի լեզվով», գործիքային ռացիոնալությամբ, օգտակարության տրամաբանությամբ և կարգավիճակային վերլուծությամբ, որոնք հեշտացնում են մանիպուլյացիոն ազդեցությունը հասարակական գիտակցության վրա՝ պարտադրելով նրան խիստ կանխորոշված «կոմունիկացիաների քերականություն[2]»: «Կոմունիկացիաների քերականությունը» ենթադրում է կոմունիկատիվ կարծրատիպերի առկայություն և օգտագործում, իսկ մանիպուլյացիան, իր հերթին, ենթադրում է կամ այդ կարծրատիպերի օգտագործում, կամ դրանց ձևափոխում, կամ էլ վերացում և դրանց փոխարեն նոր կարծրատիպերի ստեղծում:

Այսինքն, ներկայիս պայմաններում պետության և հասարակության համար մեծ կարևորություն ունեն այն սպառնալիքները, որոնք կապված են հասարակական գիտակցության վրա ներգործման հետ: Այս տեսակի սպառնալիքների վտանգավորությունն այն է, որ դրանց իրականացման համար անհրաժեշտ հարաբերականորեն փոքր ծախսերի դեպքում կարող է ապահովվել առավելագույն վնաս պետության և հասարակության համար: Այստեղ խոսքը գնում է առաջին հերթին մարդու գիտակցության մեջ իրականության արտացոլման՝ այսպես կոչված «մոդելային աշխարհների» համակարգի ձևափոխման և, համապատասխանաբար, պետական և հասարակական աստիճանակարգը ձևավորող բոլոր սուբյեկտների գործունեության հիմքում դրված մոդելների մասին:

Անհրաժեշտ է նշել, որ երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմները վտանգավոր են հատկապես այն երկրների համար, որոնք չունեն համապատասխան քանակի և որակի ռեսուրսներ ու մշակված ռազմավարություն՝ դիմակայելու համար նմանատիպ ագրեսիայի: Այդ պատճառով յուրաքանչյուր քաղաքացի պետք է հստակ գիտակցի, որ իրողությունը, ինչ խոսք, պետք է ներկայացվի օբյեկտիվորեն, սակայն ոչ առանց գիտակցական վերաբերմունքի, ներքին կարգապահության, որովհետև ցանկացած փաստ, ցանկացած վերլուծություն կարող է զորեղ զենք դառնալ հակառակորդի ձեռքում: Կասկած չի հարուցում այն, որ տեղեկատվական վերլուծական հրապարակումները, մասնավորապես մարդու գիտակցության վրա ավելի խորը, հիմնարար կերպով ազդեցություն գործող տպագիր նյութերը, կարող են հոյակապ միջոց դառնալ ազդելու համար հակառակորդի բնակչության և բանակի հոգեկանի վրա:

---

[2] Шиллер Г.- Манипуляторы сознанием.- М 1980.

Հասարակական գիտակցության ձևափոխման մեթոդների կիրառումը թույլ է տալիս փոխել աստիճանակարգի բոլոր մակարդակների սուբյեկտների գործունեության նպատակների վեկտորը: Արդյունքում փոխվում է հասարակության առաջնայնությունների ողջ համակարգը, մեծանում է պետության և հասարակության, որպես խմբակային գործունեության սուբյեկտի, ներքին բախումների առաջացման հավանականությունը: Ժողովրդադավարության պայմաններում այս ամենը բերում է հասարակական բարքերի և բարոյականության համակարգի հետզարգացման, որից էլ մեծապես կախված է պետականաստեղծ միջավայրի՝ ազգի ամբողջականությունն ու կայունությունը:

Այսինքն, մարդու և հասարակության տեղեկատվական իմունիտետի (հետևաբար նաև անվտանգության) վիճակի հիմնական որոշիչ գործոններից է մարդկային գործունեության հիմքը հանդիսացող աշխարհայացքի, աշխարհընկալման և աշխարհազգացողության համակարգերի ամբողջականության ապահովումը:

Ազգի անվտանգությունը սեփական պահանջմունքների բավարարման և զարգացման անհրաժեշտ միջավայրի ապահովման մեջ է: Այդ նպատակով ազգը (հասարակությունը) պետությանն է պատվիրակում նպատակադրող սուբյեկտի գործառույթները, որն էլ պատասխանատու է ազգային անվտանգության համար: Այս դեպքում պետության ուսերին է ընկնում ազգային անվտանգության ապահովման և զարգացման ռազմավարության մշակման բեռը:

Հասարակական գիտակցության համակարգի անվտանգության ապահովման հիմնախնդիրը առաջին հերթին ենթադրում է դրա՝ հասարակության և պետության համար ոչ ցանկալի ուղղությամբ ձևափոխման սպառնալիքների վերհանում ու վերացում, ինչպես նաև հասարակական գիտակցության ռազմավարական զարգացման ու գլխավոր նպատակային ուղղվածության պահպանում: Այս խնդիրը ուղղակիորեն կապված է պետության շահերի հետ՝ սահմանների անձեռնմխելիության, տնտեսության կայունության և համաշխարհային թատերաբեմում մրցունակության ու սեփական բարեկեցության ապահովման գործընթացներում:

Կառավարչական գործառույթների իրականացման համար պետությանը անհրաժեշտ է ունենալ հասարակական գիտակցության վրա ազդելու հնարավորություն, որպեսզի հասարակության համար ընդունելի դարձնի համընդհանուր նշանակության նպատակները՝ որոշակիորեն սահմանափակելով անձնային և հասարակական պահանջմունքները: Նշված նպատակին հասնելու համար պետության տրամադրության տակ պետք է լինեն հասարակական գիտակցության վրա ազդելու գործիքներ, որոնց օգնությամբ պետությունը կկարողանա հիմնավորել որոշակի պահանջմունքների ստորադասումը և ապացուցել իր օգտակարությունը, որպես կազմակերպչական գործիք, որը

թույլ է տալիս գործարկել և կառավարել խմբակային նպատակադրման գործընթացները:

Կախված հասարակական գիտակցության մեջ ներդրված հայացքներից՝ հասարակությունը կարող է ընդունել կամ հրաժարվել առաջարկվող (որոշ դեպքերում նաև պարտադրվող) նպատակներից: Ոչ պակաս կարևոր է նաև այն հանգամանքը, որ նշված նպատակների ընդունումը կամ ժխտումը կարող է տեղի ունենալ անկախ այդ նպատակների իրական կարևորությունից: Դա պայմանավորված է նրանով, որ հասարակության անդամները չունեն գաղափարախոսական և հայեցակարգային վերլուծության հմտություններ, թույլ են ըմբռնում գաղափարախոսության, քաղաքականության և բարեփոխումների ընթացքում սոցիալ-տնտեսական հատվածում տեղի ունեցող փոփոխությունների միջև եղած կապը:

Պետության գործունեության նկատմամբ այս կամ այն պատասխան հակազդեցությունը ձևավորվում է հասարակական գիտակցության վրա ազդելու միջոցով: Ներկայումս, երբ պետությունն է հանդիսանում խմբակային նպատակադրման սուբյեկտ, որը կառավարում է հասարակությունը մանիպուլյացիոն միջոցներով, իսկ ինքը՝ հասարակությունը չունի ռացիոնալ նպատակադրման վրա հիմնված որոշումների ընդունման ունակություն, հասարակությունում գերակայում է պատասխան հակազդեցության ձևավորման իռացիոնալ բաղադրիչը:

Մի դեպքում, երբ հասարակության կողմից դրսևորվում է պետություն ունենալու պահանջարկ (անկախ այն բանից թե այն հիմնված է հավատի կամ համոզմունքների վրա), որը պաշտպանում է նրա շահերը, պետությունը ստեղծվում և զարգանում է: Հակառակ դեպքում՝ քաղաքացիները, կենսական ապահովությունից դրդված, գործում են՝ ելնելով միայն սեփական շահերից՝ հաճախ իրականացնելով պետական ռեսուրսների հափշտակում և պետական համակարգի ապակայունացում:

Մյուս կողմից, եթե պետությունը ունի գաղափարախոսական և քաղաքական ամբողջականություն՝ պայմանավորված կառավարման միասնական ռազմավարությամբ և ներքին ու արտաքին հակասությունների համաձայնեցմամբ, ապա այն մշտապես շահագրգռված է հասարակական կարծիքի ուղղվածության երկարակեցության և ազգային ինքնագիտակցության համապատասխան մակարդակի պահպանման հարցում: Դրա համար պետությունը սովորաբար ստեղծում է հասարակական գիտակցության կառավարման մեթոդները մշակող և իրականացնող ինստիտուտներ:

Անհրաժեշտ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ կառավարման ազդեցության փոխանցումը միշտ տեղի է ունենում տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով, որոնք ապահովում են հասարակական համակարգի

կոմունիկացիոն գործընթացները, որոշ դեպքերում որպես կառավարման օբյեկտ է դիտարկվում նաև տեղեկատվական համակարգը:

Այսօր հասարակական գիտակցության (որպես պետության անվտանգության և կենսունակության կարևորագույն աղբյուրներից մեկի) կառավարման համար անհրաժեշտ են արդեն ոչ միայն հատվածական էմպիրիկ պատկերացումներ կառավարման օբյեկտի վերաբերյալ, այլ էմպիրիկայի հետ համաձայնեցված և անհրաժեշտ մակարդակի մանրամասնման (դետալիզացիայի) միասնական տեսական մոդել, որը թույլ կտա խուսափել հասարակական գիտակցության վրա կործանարար ազդեցություն ունեցող մեթոդների կիրառումից[3]: Այսինքն, անհրաժեշտ է օբյեկտին համապատասխանեցված մոդել, որը կբացահայտի նրա բնույթն ու գործառույթները, ինչպես նաև թույլ կտա ուսումնասիրել ու նկարագրել հասարակական գիտակցության ներկա վիճակը և կատարել հասարակական գիտակցության կառավարման մեթոդների հիմնավորված ընտրություն: Ընդ որում, անհրաժեշտ է այնպիսի մոդել, որի օգնությամբ հնարավոր կլիներ իրականացնել ոչ միայն տեսական և խորհրդանշական նկարագրություններ, այլ նաև մաթեմատիկական հաշվարկների իրականացման համար իրականացնել մոդելի ալգորիթմացումը և համակարգչային մշակումը: Ըստ էության, բարդ համակարգային ձևավորումների վերլուծության համար, ինչպիսին, անշուշտ, հանդիսանում է հասարակությունը, պահանջվում է համակարգային մոդելների համալիր, որոնց մեջ բազային է հանդիսանում հասարակական գիտակցության մոդելը:

Եթե կառավարման սուբյեկտը՝ տվյալ դեպքում պետությունը, իր տրամադրության տակ ունի նմանատիպ մոդելներ, որոնք թույլ են տալիս իրականացնել կառավարման օբյեկտի վիճակի նպատակադրում, վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում, ապա այն զինված է ավելի կատարյալ գործիքով քան օրենսդիր, քաղաքական, տնտեսական և իշխանության մյուս ձևերը, գործիքով, որը թույլ է տալիս իրականացնել բարդ սոցիալական և կազմակերպական համակարգերի արդյունավետ կառավարում:

Այն դեպքում, երբ կառավարման արդյունավետությունը պահովվում է նպատակադրման գործընթացների արժեքային հիմքերի վրա ազդելու հաշվին, անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել հայեցակարգային կառավարման վրա: Ներկայումս, հաշվի առնելով սոցիալական հիմնախնդիրների բարդությունը և ազգային անվտանգության սպառնալիքների դրսևորվածության բարձր աստիճանը, նորմատիվային կառավարումից հայեցակարգայինին անցնելու անհրաժեշտությունը ավելի քան ակներև է:

---

[3] Куликова Н.В. «Методология психологического обеспечения целеопределенной деятельности при решении задач управления сложными системами», Докторский доклад, Депозитарий Ученого Совета МУИТ, 2003 г.

Հայեցակարգային կառավարումը ավանդաբար իրականացվում է կրթության և քարոզչության միջոցով՝ հասարակական գիտակցության կառավարման մեթոդների կիրառման հաշվին: Այս համատեքստում դժվար է թերագնահատել տեղեկատվական տեխնոլոգիաների դերը, որոնք ներկայումս, ինչպես վերը նշվեց, մեծ զարգացում են ապրում:

Խոսքը գնում է կառավարման ավելի բարձր կարգի մոդելի ստեղծման մասին, քան այն կառավարման մոդելներն են, որոնք մշակվել են փոխհատուցողական, և անգամ, կանխատեսական կառավարման շրջանակում:

Այսինքն, համակարգային վերացական մոդելի հիման վրա իրականացվող կառավարում, որը բնութագրում է նպատակադրման աքսիոմատիկությունը, այսինքն՝ ապագայի էտալոնային մոդելը, որն էլ իր հերթին մշակվում է օբյեկտի ելիցային մոդելի գործածման հնարավոր տարբերակների կանխատեսման և մոդելավորման միջոցով[4]:

Անհրաժեշտ է նշել, որ բարդ համակարգերի հայեցակարգային կառավարման իրական արդյունքները այնքան արագ չեն երևում, ինչքան կառավարման մյուս ձևերի դեպքում, սակայն հայեցակարգային կառավարումն է ապահովում կառավարչական աստիճանակարգի բոլոր բաղադրիչների արդյունավետությունն ու փոխգործությունը: Հենց հայեցակարգային կառավարումն է, որ օգտագործելով մյուս բոլոր կառավարման ձևերը որպես գործիքներ, կարևորագույն հիմք է հանդիսանում «պետություն-հասարակություն» համակարգի ամբողջականության պահպանման համար և գրեթե միշտ կոմպենսացնում կառավարման այս կամ այն մակարդակի ոչ արդյունավետ գործունեությունը կամ ընհանուր առմամբ կառավարման ողջ համակարգի անկատարությունը:

Կառավարումը՝ որպես նպատակաուղղված գործունեության ձև, ենթադրում է կառավարման սուբյեկտի, օբյեկտի, գործիքների և ազդեցության առկայություն: Վերջիններս սուբյեկտի կողմից օգտագործվում են որոշակի նպատակների տեսանկյունից օբյեկտի վիճակի և վարքագծի փոփոխման նպատակով: Հասարակության հայեցակարգային կառավարման հիմնական մոդելներից է գիտակցության մոդելը, որը միաժամանակ հանդես է գալիս և որպես կառավարման սուբյեկտ, և որպես օբյեկտ:

Ցանկացած տեսական մոդել, անկախ այն բանից, թե ինչի համար է այն ստեղծվել, նախևառաջ հանդիսանում է նպատակաուղղված համարժեք (էկվիվալենտ), քանի որ այն միշտ ստեղծվում է հաշվի առնելով որոշակի նպատակներ և օբյեկտի հետազոտության խնդիրները:

---

[4] Куликова Н.В. «Технологии целевого программирования сознания» и «Сущность и алгоритм рефлексивных процессов», 2003, том 2.

Հասարակական գիտակցական անվտանգության ապահովման հիմնախնդիրների վերլուծության նպատակով անհրաժեշտ է դիտարկել գիտակցության այնպիսի մոդել, որն ունի մի շարք սկզբունքային տարբերություններ՝ գիտակական գրականության մեջ նախկինում դիտարկված գիտակցության մոդելներից: Ըստ էության, հասարակական գիտակցության օրինաչափությունների հետազոտման համար կիրառվող նախկին մոդելները հարմարեցված չէին բարդ համակարգերի վերլուծության խնդիրների լուծմանը: Նրանք իրենցից ներկայացնում էին գիտակցության՝ որպես անորոշ կամ պայմանականորեն որոշված բովանդակությամբ համակարգի, գործառնության տրամաբանության տեսական նկարագրության փորձեր[5]:

Այդ մոդելների էական թերությունն այն է նրանում, որ նրանք վերաբերվելով գիտակցության գործառնական կողմին, չէին դիտարկում գիտակցությունը որպես աբստրակտ, չտրոհվող օբյեկտ: Ընդ որում, գիտակցությունը ավելի հաճախ նույնացվում էր ինչ-որ երևույթի հետ, որը իրականացնում է դատողության գործառույթ:

Տվյալ դեպքում, կիրառելով ժամանակակից գիտությունների նվաճումները (ներառյալ համակարգաբանությունը, կիբեռնետիկան, հոգեբանությունը, նեյրոֆիզիոլոգիան, փսիխոֆիզիոլոգիան և այլն) հասարակական գիտակցությունը կարելի է դիտարկել, առաջին հերթին, որպես տեղեկատվության շրջանառության համար նախատեսված տեղեկատվական համակարգ, որը ունի տեղեկատվության ընդունման, փոխանցման ու մշակման և պատասխան հակազդեցության ձևավորման հատուկ ունակություն:

Այսպիսով, բարդ համակարգերի կառավարման և վերլուծության մեթոդոլոգիայի կիրառումը պետության և հասարակության անվտանգության համար անհրաժեշտ բոլոր տեսակի ռազմավարությունների արդյունավետ մշակման կարևորագույն գրավականն է: Միևնույն ժամանակ նշված մեթոդոլոգիան կարիք ունի զարգացման՝ կառավարչական գործունեության կիրառական մակարդակ տեղափոխման միջոցով[6]:

Այս ամենը, մեր կարծիքով, հնարավոր է իրականացնել հետևյալ պայմանների առկայության դեպքում.

1. պատվիրատուի առկայություն՝ ի դեմս պետության,
2. կատարողների խմբի ձևավորում, որում կընդգրկվեն մասնագետներ հասարակական գործունեության տարբեր բնագավառներից և գիտական ոլորտներից,

---

[5] Куликова Н.В. «Методология психологического обеспечения целеопределенной деятельности при решении задач управления сложными системами», Докторский доклад, Депозитарий Ученого Совета МУИТ, 2003 г.

[6] Малюта А.Н. Гиперкомплексные динамические системы; Закономерности развития сложных систем; Система деятельности, Монографии, Наукова Думка, Киев, 1990, 1991, 1992 г.

3. խմբի աշխատանքների՝ ընդհուպ մինչև հստակեցված ենթածրագրերի կազմման ռեսուրսային ապահովում:

Այս ամենի արդյունքում կմշակվի ազգային անվտանգության ռազմավարության մշակման (ինչու չէ նաև թարմացման) գործընթացի հիմնատարրը հանդիսացող իրավիճակային վերլուծության և կանխատեսման մեթոդների ու գործիքների փաթեթ, որը կներառի՝

- գաղափարախոսական և աշխարհընկալման համակարգի ձևավորման ու վերլուծության սկզբունքներն ու հիմնադրույթները՝ հաշվի առնելով հասարակական գիտակցության զարգացման մակարդակը,
- հասարակության բարոյականության և պահանջմունքների կառավարման համակարգերի ձևավորման ու բարելավման մեխանիզմներ:

Ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով այն, որ ազգային անվտանգության ռազմավարությունը ոչ միայն հստակեցնում է ազգային շահերը, պետության առջև ծառացած սպառնալիքները և դրանց չեզոքացման ուղիները, այլև, վերջին հաշվով, կանխագծում է տեսանելի ապագայում պետության զարգացման ուղղվածությունն ու բովանդակությունը, մեր կարծիքով, ազգային անվտանգության ռազմավարության ձևավորման ընթացքում անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել հետևյալ հիմնադրույթների վրա.

1. Ռազմավարությունը չի կարող ձևավորվել առանց ներկա իրավիճակի ուսումնասիրության և ռազմավարության իրագործման տարբեր փուլերում առաջացող սպառնալիքների բնույթի ու առանձնահատկությունների կանխատեսման և վերլուծության:
2. Ռազմավարությունը անհրաժեշտ է մշակել այնպիսի ժամանակահատվածի համար, որի ընթացքում ապահովվում է պետության և հասարակության նպատակների հարաբերական կայունություն:
3. Նշված ժամանակահատվածի համար մշակված ռազմավարությունը պետք է ենթադրի պարբերական թարմացում՝ ընթացիկ իրավիճակի, սպառնալիքների առանձնահատկությունների և զարգացման վերլուծության, ինչպես նաև պետության և հասարակության պոտենցիալ սպառնալիքների վերհանման ու կանխատեսման հիման վրա: